

էր Երուսաղէմ ձեռնադրելու զԳրիգոր Գանձակեցի Ս. Յակոբեանց վանքի եպիսկոպոս: Ձեռնադրութիւնը տեղի ունեցած է նոյն տարւոյն Ապրիլ 5ին: Աւետիս իր կոնդակին մէջ, զոր տուած է նորընծայ եպիսկոպոսին, ի շարս անոր արժանաւորութեան վկայողներու կը յիշէ նաեւ զՄովսէս այսպէս¹. «... Երուսաղէմայ Արդար Դաւթի եպիսկոպոսի վկայութեամբն, Մովսէս վարդապետին Տաթեւացւոյն եւ այլ ամենայն ուխտականաց եւ բնակաց (Երուսաղէմայ) հինգ հարիւր ժողովելոց» (վկայութեամբ): Տողերս այնպէս իմանալ կը թելադրեն, թէ Աւետիս հանդիպած է Մովսէս վարդապետին Երուսաղէմի մէջ: Իսկ Մովսէս ինքնին կը գրէ իւր առ Գրիգոր Կեսարացի թղթին մէջ թէ «Աւետիսն կայ ի էջմիածինն եւ ասվիս զգեցեալ. եւ մեզ սիրելութեան թուղթ է առաքեալ. որ մեր յԵրուսաղէմայ գալն փոքր ի շատէ աստուածվախոսքիւն տեսաք ի նմա» (տե՛ս էջ 32):

Մովսէսի պանդխտութեան օրերու կը հային 1650ին զրուած յիշատակարանի մը խօսքերը, զոր հաւանօրէն աչքի առաջ ունեցած է Առաքել². «զոլով սա (Մովսէս) ի գաւառէն Սիւնեաց՝ լեալ աշակերտ Սրապիոն կաթողիկոսին եւ շրջեալ ժամանակս ինչ ի

¹ Տես վարը, էջ 65:

² Աւելի ճիշդ թէ՛ Առաքել եւ թէ՛ Յիշատակարիւս Ղ. Գառնեցոյ ազդեցութեան տակ կ'երեւան: